ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի հոկտեմբերի 19-ից 21-ը Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ֆելիքս Մելքոնյան, Սամվել Ղազարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության Եվրասիական տնտեսական միության օրենսդրության մեթոդական ապահովման բաժնի պետ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Մաքսային հսկողության վարչության նախնական մաքսային հայտարարագրերի հսկողության բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, ս.թ. հոկտեմբերի 19-ից 21-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

19.10.2022 – 21.10.2022թթ. ք. Մոսկվայում ընթացել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի զարգացման գծով աշխատանքային խմբի հերթական 40-րդ նիստը, որի օրակարգում ընդգրկված հարցերն են՝

1) «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 11.04.2017թ. պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ներկայացված՝ լիազորված տնտեսական օպերատորներին առնչվող փոփոխություններ (լրացումներ).

2) Լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման համար դիմում ներկայացրած իրավաբանական անձանց հաշվառման

համակարգին ներկայացվող պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշման նախագիծ.

3) Համաշխարհային մաքսային կազմակերպության հարթակում լիազորված տնտեսական օպերատորներին վերաբերող առանձին նախաձեռնություններ:

6. Քննարկված թեմաները՝

Աշխատանքային խմբի նիստի ընթացքում մասնավորապես քննարկվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքում լիազորված տնտեսական օպերատորներին առանձին պարզեցված ընթացակարգերի տրամադրմանը, Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետությունների լիազորված տնտեսական օպերատորների հետ փոխադարձ ճանաչման համաձայնագրերի կնքմանը, այդպիսի համաձայնագրերի շրջանակներում առանձին պարզեցված ընթացակարգերի տրամադրմանը, իրավաբանական անձանց լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընդգրկման պայմաններին առնչվող կարգավորումները,, լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ընգրկմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող պահանջները (հաշվառման համակարգում ներառման ենթակա՝ մաքսային գործառնություններին առնչվող տեղեկատվության կազմ, տեղեկատվության պաշտպանության հարցեր, տեղեկատվության համար հիմք հանդիսացող հաշվառման փաստաթղթեր, այդպիսի փաստաթղթերին ներկայացվող պահանջներ, մաքսային մարմինների համար հաշվառման համակարգին մուտքի տրամադրման կարգավորումներ, իրավաբանական անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման կարգավորումներ), ինչպես նաև Համաշխարհային մաքսային կազմակերպության հարթակում 2024 թվականի վերանայման շրջանակներում տարբեր պետությունների կողմից ներկայացված՝ համաշխարհային առևտրի պարզեցման և անվտանգության շրջանակային ստանդարտներին առնչվող առաջարկները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպումները տեղի են ունեցել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հարթակում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի համապատասխան պաշտոնատար անձանց և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային մարմինների և գործարար համայնքի ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում ներկայացվել են քննարկվող վերը նշված հարցերի վերաբերյալ առաջարկներ, դիրքորոշումներ, պարզաբանումներ, ինչի հիման վրա մշակվել և համաձայնեցվել են համապատասխան կարգավորումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատանքային խմբի նիստի արդյունքներով մշակվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի՝ լիազորված տնտեսական օպերատորներին վերաբերող առանձին կարգավորումներ, լիազորված տնտեսական օպերատորների և լիազորված տնտեսական օպերատորների ռեեստրում ներառմանը հավակնող իրավաբանական անձանց հաշվառման համակարգին ներկայացվող պահանջները սահմանող Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշման նախագծի տեքստը, ինչպես նաև համաձայնեցվել են համաշխարհային առևտրի պարզեցման և անվտանգության շրջանակային ստանդարտներին առնչվող առաջարկների շուրջ միասնական մոտեցումներ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Լիազորված տնտեսական օպերատորի ինստիտուտի զարգացմանն առնչվող օրենսդրական առաջարկների հետագա քննարկումները շարունակվելու են աշխատանքային խմբի հաջորդ նիստերի, ինչպես նաև մաքսային կարգավորման կատարելագործման հարցերով աշխատանքային խմբի շրջանակներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Ֆելիքս Մելքոնյան _____

Սամվել Ղազարյան _____

25.10.2022թ.